Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 382 - Ա որոշման

«Տնակներ զինվորների համար»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների, ինչպես նաև ՀՀ զինված ուժերին կամավորագրված անձանց համար տնակների կառուցում: Տնակները նշված անձանց կողմից օգտագործվելու են զինվորական հերթապահության ժամանակ և ապահովելու են վերջիններիս համար մինիմալ կենցաղային պայմաններ՝ հանդիսանալով ժամանակավոր կացարան:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքեր և այլ պարտադիր վճարների արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայ վիրավոր հերոսների աջակցման» հասարակական կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հիմնադրամների, ոչ առևտրային կազմակերպությունների ու անհատ բարերարների (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ) կողմից հանգանակած միջոցների հաշվին:
4.	Ծրագիրը կատարողը	«Հայ վիրավոր հերոսների աջակցման» հասարակական կազմակերպություն (ՀՀ, քաղ. Երևան, Իսակովի պողոտա, 11 Ա շենք, ՀՎՀՀ՝ 02283677)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն՝ սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	450 մլն դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի մայիսի 25-ից 2023 թվա-կանի մայիսի 25-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հաշվի առնելով Հայաստանի ռելիեֆը և կլիմայական պայմանները՝ կառուցվելու են ջերմամեկուսիչ կացարաններ, ինչպես նաև այնպիսի տնակներ, որոնք կահավորված են լինելու խոհանոցով, բաղնիքով և ջրատաքացուցիչներով: Ջերմամեկուսիչ մեկ կացարանի արժեքը կկազմի մոտ 8,500 ԱՄՆ դոլարին համարժեք մոտ 4,430,000 ՀՀ դրամ: Կահավորված մեկ տնակի արժեքը կկազմի մոտ 10,000 ԱՄՆ դոլարին համարժեք մոտ 5,222,000 ՀՀ դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայություն-ների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում պատվիրվելու են մոտ 90-100 տնակների կառուցման, տեղափոխման և տեղադրման ծառայություններ շուրջ 450 մլն ՀՀ դրամի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

13.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ